Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց
14 հունվար 2013

Հասկանալ ֆինանսական շուկաները, տեղեկատվությունը և վերլուծությունները գիտակցված ներդրումների նպատակով

Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների երկրորդ հատորի երկրորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսատնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, սակայն անդրադառնալով նաև համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում,Եվրոպայում և Ասիայում:.

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

• Նահանգների տնտեսության հեռանկարը շարունակեց բարելավվել, քանզի գործազրկությունը մնաց անփոփոխ, իսկ նոր աշխատատեղերի ստեղծումը շարունակվեց, կանխատեսվում է, որ 2013թ. ՀՆԱ-ն կաճի 2,1 տոկոսով: Այնունամենայնիվ, առևտրային դեֆիցիտի անսպասելի աճը, քանզի ներմուծումները գրեթե չորս անգամ գերազանցեցին արտահանումները, դժվարացնում են բանակցությունները պետական պարտքի մակարդակի վերաբերյալ և մարտահրավեր են հանդիսանում ԱՄՆ Գանձապետարանի քարտուղարի պաշտոնին՝ նախագահ Օբամայի թեկնածուի համար:

• Արտացոլելով Եվրոպայի խորը թուլությունը՝ 2013թ. ՀՆԱ-ի 0,3 տոկոս անկման կանխատեսումները միմյայն նպաստեցին ներդրողների մտահոգությունների մեծացմանը՝ համակցվելով գործազրկության աճի հետ: Այնուամենայնիվ, փոքր, բայց կայուն աճ գրանցվեց կորպորատիվ և սպառողական վստահության մեջ: Ներդրողների վստահությունը վերականգնելու նպատակով Հունաստանը հարկային նոր օրենքներ ընդունեց՝ կատարելով առանցքային նախապայմանը միջաժամկետային ֆինանսակայուն օգնությունը ստանալու համար՝ օգնության նոր փաթեթը ստանալուց հետո:

• Ասիայում չինական տնտեսության հեռանկարը բարելավվեց, իսկ Ճապոնիայի նոր կառավարությունը հայտարարեց խթանիչ լայն փաթեթի մասին, որի նպատակն է աջակցել վերականգմանը ճգնաժամից, զսպել դեֆլացիան և խթանել տնտեսական աճը:

• Նավթի համաշխարհային գները նվազեցին՝ պայմանավորված չինական պահանջարկի վերաբերյալ մտահոգություններով, համաշխարհային մատակարարման աճով և ամերիկյան նավթային արտադրանքի ավելացմամբ:

ԱՄՆ ներդրողները ավելի լիահույս են՝

Ամսվա սկզբին վստահություն ներշնչող գործազրկության զեկույցի լույս տեսնելուց հետո Ամերիկյան տնտեսության հեռանկարը շարունակեց բարելավվել, քանզի պետական և տեղական կառավարությունները հայտարարեցին նոր նախագծերի մասին ներդրումներ կատարել նոր կառույցների շինարարության մեջ նոր աշխատակիցներ վարձելու նպատակով վերջին հինգ տարիներին նրանց աշխատատեղերը 500,000-ով կրճատելուց հետո: Վարձակալության և ծախսերի նոր նախագիծը արտոցոլում են վերադարձ առավել ապավով ֆինանսական դիրքերին ամերիկյան 18-ամսյա ճգնաժամի մեկնարկից սկսած: Կարևոր է, սակայն, նշել, որ առավել առողջ պետական և տեղական կառավարությունները, որոնք 2011թ. կազմեցին ՀՆԱ-ի 12 տոկոսը, կխթանեն կանխատեսվող տնտեսական աճը, քանզի նախատեսված է, որ 2013թ. ՀՆԱ-ը կաճի 2,1 տոկոսով՝ հաջորդելով 2012թ. 2,3 տոկոս աճին:

ԱՄՆ առևտրային դեֆիցիտ (միլիարդ դոլարներ)



Աղբյուր՝ US Census Bureau

Միաժամանակ, ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի վերջին զեկույցը ցույց տվեց առևտրային դեֆիցիտի անսպասելի ընդլայնում 2012թ. նոյեմբերին, քանզի ներմուծման ծավալները գրեթե 4 անգամ գերազանցեցին արտահանումները:

Ամսեկան առևտրային բալանս (միլիարդ դոլարներ)



Աղբյուր՝ US Census Bureau

Թեպետ այս միտումը արտացոլում է համաշխարհային տնտեսության վերականգման սկիզբը, առևտրային դեֆիցիտի 15,8 տոկոս աճը, որը կազմում է 48,7 միլիոն դոլար, հանդիսանում է ամենամեծ աճը 2012թ. ապրիլից: Ներմուծման ծավալների 3,8 տոկոս աճը՝ կազմելով 231,3 միլիարդ դոլար, պայմանավորված էր սպառողական ապրանքների պահանջարկի գերթե ռեկորդային աճով, թեպետ ամերիկյան ընկերությունները շահեցին նաև համաշխարհային վաճառքներից՝ մասնավորապես, ավտոմեքենաների և հեռահաղորդակցային ապրանքների՝ նպաստելով 2012թ. նոյեմբերին արտահանումների ծավալներում 1 տոկոսոց աճին՝մինչև 182,6 միլիարդ դոլար:

Ամրիկյան արտահանումներն ու ներմուծումները (տարեկան տոկոսներ)



Աղբյուր՝ US Census Bureau

Անցած շաբաթվա նորություններից կարելի է առանձնացնել նախագահ Օբամայի կողմից Ջեյքբ Լևի՝ Սպիտակ Տան աշխատակամի ղեկավարի թեկնածության առաջադրումը որպես ԱՄՆ գանձապետարանի քարտուղար: Լևն ունի բյուջետային մեծ փորձ՝ նախկինում՝ նախագահներ Օբամայի և Քլինթոնի օրոք զբաղեցնելով բյուջետային տնօրենի պաշտոնը: ԱՄՆ Սենատի կողմից նրա թեկնածության հապճեպ հաստատումը ևս կարևոր էր Սպիտակ Տան համար, քանզի գանձապետարանի քարտուղարը այսպես կոչված «պարտքային առաստաղի» կամ պետական փոխառությունների մակարդակի վերաբերյալ Կոնգրեսի հետ գալիք բանակցություններում առանցքային մասնակից է լինելու: Այդ բանակցությունները չափազանց կարևոր են, քանզի ԱՄՆ-ի պետական պարտքը 2012թ. դեկտեմբերի 31-ին հասավ 16,394 տրիլիոն դոլար մակարդակին:

Խավար հեռանկար Եվրոպայի համար

Որոշ արտահայտելով եվրոզոնայի ավելի խորը թուլությունը՝ Եվրոպական Կենտրոնական Բանկը (ԵԿԲ) նվազեցրեց ՀՆԱ-ի աճի իր կանխատեսումները ՝ վերանայելով 2013թ. եվրոզոնայի ՀՆԱ-ի անկման կանխատեսումները մինչև 0,3 տոկոս նվազում: Եվրոզոնայի տնտեսությունները 2012թ. երրորդ քառորդում նվազեցին 0,1 տոկոսով՝ անցած երեք ամիսներից յուրաքանչյուրում ցուցադրելով 0,2 տոկոսանոց անկում, և նախնական վիճակագրությունը բացահայտեց, որ 2012թ. չորրորդ՝ վերջին քառորդում, ՀՆԱ-ն գահավիժեց ևս 0,3 տոկոսով:

Eurostat-ի կողմից հրապարակված վերջին թվերը ցույց են տալիս եվրոզոնայում գործազրկության մակարդակի մի փոքր աճ՝ 2012թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,2 տոկոսից աճելով մինչև 11,8 տոկոս, կամ գործազուկր ևս 2 միլիոն մարդկանցով: Առանցքային է նաև, որ եվրոզոնայի առավել թույլ տնտեսությունները Հունաստանում և Իսպանիայում շարունակում են պայքարել գործազրկության 25 տոկոսից ավել, չափազանց բարձր մակարդակների դեմ: Հունաստանի և Իսպանիայի երիտասարդների 60 տոկոսը գործազուրկ են: Այնուամենայնիվ, եվրոզոնայի կորպորատիվ և սպառողական վստահության միասնական ինդեքսը կանխատեսվածից ավելի լավ արդյունք գրանցեց՝ ցուցադրելով չնչին աճ, սակայն նաև վստահության կայուն բարելավում:

Աջակցելով ներդրողների վստահության վերականգմանը՝ Հունաստանի խորհրդարանը ընդունեց հարկային նոր օրենքներ, որոնք պետական եկամուտները կավելացնեն 2,3 միլիարդ եվրոյով ($3.1 տրիլիոն)՝ իրականացնելով մոտ ապագայում միջազգային ֆինանսական օգնություն ստանալու համար առանցքային նախապայմանը: Այս քայլը հաջորդում է եվրոզոնայի 17 ֆինանսների նախարարների ընդունած որոշմանը, որոնք հաստատեցին Հունաստանին տրվելիք օգնության նոր 49,1 միլիարդ եվրոյի փաթեթը, որից 34,3 միլիարդ եվրով անմիջապես կփոխանցվի հունական կառավարությանը: Հունաստանի հարկային օրենսդրության փոփոխությունները մաս են կազմում հունական պետության ավելի ընդարձակ տնտեսման խիստ քաղաքականության, հանդիսանում են նոր միջոցառումներ հարկային բազային ընդլայնելու համար: Մտցվում է նաև 20 տոկոսանոց հարկ կապիտալի հավելաճի վրա, իսկ կորպորատիվ հարկի դրույքաչափը 40 տոկոսից իջեցվում է 32,8 տոկոսի: Հունաստանը դեռևս լուրջ մարտահրավերի առջև է կանգնած հարկահավաքության արդյունավետությունը բարելավելու առումով և դեռևս պետք է զբաղվի հարկերից խուսափելու լայնածավալ խնդրով:

Հայաստ Ասիային՝

Համաձայն անցած շաբաթ Deutsche Bank-ի կողմից հրապարակված տնտեսական նոր կանխատեսումների՝ նախատեսվում է , որ չինական տնտեսությունը ավելի կայուն բարելավում կգրանցի 2013թ: Նոր հաշվարկները կանխատեսում են ՀՆԱ-ի 8 տոկոսանոց աճ տարվա առաջին կեսի համար, որին կհաջորդի ավելի բարձր 8,5 տոկոսանոց աճը երկրորդ կեսում՝ համեմատած 2012թ. երկրորդ կեսի 7,6 տոկոս աճի հետ: Տնտեսական վերականգման մեծ մասը պայմանավորված է շինարարության, առողջապահության, բեռնափոխադրումների և էներգետիկ հատվածներում նշանակալի բարելավմամբ: Զեկույցի մեջ հայտնաբերված չինական տնտեսության ավելի թույլ հատվածները ներառում է բանկային հատվածը, ինչը ըստ կանխատեսումների՝ վնասներ կկրի չկատարվող և չաշխատող վարկերի աճից, ինչպես նաև պողպատե և ածխի արդյունաբերություններից, որոնք տառապում են առաջարկի ավելցուկի աճող մակարդակներից:

Չինական տնտեսության այդ լավատեսական հեռանկարը հաստատվեց նաև վերջին տվյալներով, որոնք 2012թ. դեկտեմբերին չինական արտահանման ծավալներում ցուցադրեցին 14,1 տոկոս աճ նախորդ տարվա համեմատ՝ հանդիսանալով ամենամեծ աճը արտահանման ծավալներում 2012թ. մայիսից: Ի հավելումն սրան՝ չինական տնտեսությունը խթանվեց արդյունաբերության 19 ամսյա բարձր մակարդակներից, ինչը մեծացնում էր հույսերը, որ համաշխարհային երկրորդ խոշորագույն տնտեսությունը կվերականգվի 7 քառորդների դանդաղումից հետո: Հաշվի առնելով այն, որ Չինաստանի արտասահմանյան վաճառքները 2012թ. դեկտեմբերին անցյալ տարվա համեմատ ավելացան 14,1 տոկոսով՝ հեռու հետևում թողնելով կանխատեսված 5 տոկոս մակարդակը, ինֆլյացիան ևս աճեց կանխատեսվածից ավել, մինչև յոթամսյա բարձրագույն մակարդակները:

Բացի այդ, անցած շաբաթ Չինաստանի կառավարությունը հայտարարեց նոր նախագծի մասին, որով չինացի անհատ ներդրողները թույլտվություն կստանան մասնակցել արտասահմանյան կապիտալի շուկաներին: Սա առաջին քայլն է հանդիսանում, որն ընկալվում է որպես համաշխարհային ֆինանսներում Չինաստանի արժույթի դերը բարձրացնելու ամբիցիայի մաս: Այս նոր փորձնական ծրագիրը կվերահսկվի Չինաստանի Ժողովրդական Բանկի կողմից և կծառայի նախապես ընտրված տղական անհատ ներդրողների նոր խմբին: Այս ծրագիրը ընկալվում է նաև որպես փորձ չինական ղեկավարության կողմից կրճատել կախվածությունը ամերիկյան դոլարից միջազգային փոխանակման ռեզերվներում ավելի քան 3,31 տրիլիոն դոլար հավաքելուց հետո՝ հանդիսանալով Միացյալ Նահանգներից դուրս աշխարհի խոշորագույն դոլարային ներդրումները: Նախագիծը ներառում է նաև կապիտալի հոսքերի համար նոր ուղիների աստիճանական բացում, ինչպես նաև սահմանափակումների թեթևացում Չինաստանի քաղաքացիների արտասահմանյան ներդրումների վրա՝ միաժամանակ փորձելով յուանը դարձնել ամբողջությամբ կոնվերտացվող արժույթ: Թեպետ այս ծրագիրը նախապես 2006թ. մեկնարկել էր ավելի փոքր ծավալներով, այս նոր հայտարարությունը կթույլատրի անհատ չինացիներին ակտիվներ կառավարողների և ֆոնդերի միջոցով ձեռք բերել արտասահմանյան արժեթղթեր:

Ասիայում ներդրողները ոգևորվեցին նաև Ճապոնիայի պառավարության 116 միլիարդ դոլարանոց (10.3 տրիլիոն իենա) խթանիչ փաթեթից, որի նպատակն է վերականգնվել ճգնաժամից, զսպել դեֆլացիան և աջակցել տնտեսական աճին: Խթանիչ այս փաթեթը հանդիսանում է անցյալ ամիս ընտրված վարչապետ Աբեի կառավարության կողմից նոր քաղաքականության առաջին նախաձեռնությունը և ջանում է խթանել ՀՆԱ-ի 2 տոկոսանոց աճ միաժամանակ ստեղծելով 600,000 նոր աշխատատեղեր: Նոր կառավարությունը փորձում

է նաև ճնշում գործադրել Ճապոնիայի բանկի վրա, որպեսզի վերջինս փոխի ցածր ինֆլյացիան պահելու իր քաղաքականությունը՝ որդեգրելով «համարձակ դրամավարկային քաղաքականություն»՝ դրա փոխարեն կենտրոնանալով տնտեսական աճի ընդլայնման և աշխատատեղերի ստեղծման վրա: Մասնավորապես, այս նոր նախագիծը կփորձի լուծել իենայի արժեվորման հարցը, ինչի արդյունքում արտահանումները նվազել են, ինչպես նաև ներառում է նոր միջոցառումներ ճապոնական ընկերությունների կողմից արտասահմանյան կլանումներն ու ձեռքբերումները խրախուսելու և աջակցելու նպատակով:

Ի հավելում սրան՝ Ճապոնիայի կառավարությունը պատրաստվում է նաև օգտագործել պետության արտասահմանյան արժույթային պահուստները եվրոպական բաժնետոմսերում ընդարձակ ներդրումները ֆինանսավելու համար: Պետական ծախսերի մեծ մասը կուղվի Տոկուհու շրջանի վերակառուցման ծրագրերին, որը ավերվել էր 2011թ. մարտի երկրաշարժից և ցունամիից, ինչպես նաև բնական աղետների կանխարգելմանը: Պետական ծախսերի երկրորդ խոշորագույն բնագավառը թիրախային այսպես կոչված «հարստության ստեղծումն է» այնպիսի միջոցներով, որոնց նպատակն է ուժեղացնել ճապոնական արդյունաբերության մրցունակությունը և խթանել նորարարությունը: Մյուս ծախսերը կկենտրոնանան սոցիալական անվտանգության, առողջապահության, կրթության և տարածքային զարգացման վրա:

Համաշխարհային ապրանքային և արժույթային շուկաներ՝

Անցած շաբաթ նավթի համաշխարհային գները անկում ապրեցին՝ փակվելով բարելի դիմաց 93 դոլար մակարդակի վրա, քանզի սպասվածից ավել ստացված Չինաստանի ինֆլյացիան վերականգնեց ներդրողների մտահոգությունը չինական պահանջարկի վերաբերյալ: Չինաստանի էներգետիկ հատվածում պահանջարկի ցանկացած նվազման վերաբերյալ աճող մտահոգությունը դրդեց վերլուծաբաններին կանխատեսել նավթի գների անկում մինչև 10 դոլար կամ ավելի մոտակա մի քանի ամիսների ընթացքում հաշվի առնելով այն փաստը, որ Չինաստանը՝ որպես Միացյալ Նահանգներից հետո նավթի սպառման խոշորագույն պետություն, որի նավթի պահանջարկը 2011թ. կազմել է համաշխարհային պահանջարկի 11 տոկոսը՝ այդպիսով ազդելով նավթային համաշխարհային գների վրա: Նավթի գների նվազման մեկ այլ շարժիչ ուժ է մատակարարման և Միացյալ Նահանգների արտադրանքի աճը, քանզի անցած շաբաթ ամերիկյան հում նավթի արտադրությունը աճեց 0,2 տոկոսով մինչև օրեկան 7 միլիոն բարել՝ հասնելով իր բարձրագույն մակարդակին 1993թ.-ից և արտահայտելով Ամերիկյան արտադրության աճի ավելի երկար՝ վերջին 18-ից 17 շաբաթների ընթացքում:

Միջազգային արժույթի շուկայում, իենան դոլարի դիմաց նվազեց 1,2 տոկոսով՝ գրոնցելով ամենաթույլ մակարդակը 2012թ. հունիսից: Իենան ամրապնդեց իր ամենաերկար շաբաթական նվազման շարքը քառորդ դարի ընթացքում այն բանից հետո,երբ ճապոնիայի կառավարությունը հաստատեց արժույթի արժեզրկման իր նախագիծը: Եվրոյի արժեքը աճեց բոլոր 16 հիմնական արժույթների հանդեպ՝ 2,1 տոկոս աճեվ դոլարի հանդեպ՝ պայմանավորված այն նոր լավատեսությամբ, որ Եվրոպան աստիճանաբար վերականգնվում է իր տնտեսական անկումից և պարտքային ճգնաժամից: Ավստրալական և Նոր Զեկանդական դոլարները ևս աճեցին երկրորդ շաբաթն անընդմեջ, որի համար խթան հանդիսացավ դեկտեմբերին չինական ներմուծման ծավալներում 6 տոկոսանոց աճը՝ հանդիսանալով ամենամեծ աճը 6 ամիսների ընթացքում և արտացոլելով Չինաստանիդերը որպես Ավստրալիայի խոշորագույն առևտրային գործընկեր և Նոր Զելանդիայի երկրորդ խոշորագույն արտահանման շուկա:

Հայաստանյան իրադարձություններ՝

The Wall Street Journal-ի և Heritage Foundation հետազոտական կենտրոնի նոր թողարկած տարեկան ուսումնասիրության մեջ Հայաստանը գնահատվել էր որպես նախկին խարհրդային պետությունների մեջ ամենաազատ և բաց տնտեսություններից մեկը: Տնտեսական ազատության 2012թ. ինդեքսը գնահատում է 177 երկրներ և տարածքներ չորս կոնկրետ բնագավառներում. տնտեսական ազատություն, օրենքի իշխանություն, կառավարության մեծություն և շուկայի հասանելիություն: Հայաստանի տնտեսությունը գնահատվեց 38-րդը՝ ներառելով նաև դրական գնահատականներ վերջինիս «համեմատաբար արդյունավետ» կարգավորիչ դաշտի և «պետական ծախսերի ավելի լավ կառավարման» համար:

Ուսումնասիրության առարկա եվրոպական 43 պետություններից, Հայաստանը զբաղեցրեց 17 –րդ տեղը տնտեսությունների մի խմբում, որը անվանվեց «սահմանափակ ազատ»: Այդ խմբի մեջ մտնում էին նաև Ֆրանսիան, Իսպանիան և Թուրքիան: Հայաստանի տնտեսության ընդհանուր դրական գնահատումը պայմանավորված էր նաև նրանով, որ ուսումնասիրության մեջ հաշվի էր առնվել երկրի կատարողականության ընդհանուր բարելավումը՝ բիզնես գործընթացների պարզեցում, համեմատաբար թեթև հարկային բեռ և աշխատուժի սահմանափակ, ոչ աշխատավարձային արժեքը:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը մտահոգություն արտահայտեց օրենքի իշխանության վիճակի վերաբերյալ նշելով, որ թեպետ Հայաստանը համեմատաբար լավ է իրեն դրսևորում տնտեսական ազատությունների շատ կատեգորիաներում, սակայն ավելի ուժեղ հիմքեր են անհրաժեշտ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դատական անկախությունը և կառավարության թափանցիկությունը: Ուսումնասիրության մեջ ասվում է նաև, որ ի հեճուկս կոռուպցիայի դեմ պայքարում առաջընթացին՝ հատկապես հարկային և մաքսային կառույցներում, գործարար և քաղաքական շրջանակների սերտ հարաբերությունները մտահոգություն են առաջացնում հովանավորչության և կորպորատիվ շահերի ունեցած ազդեցության վերաբերյալ:

Հայաստանյան պաշտոնյաները վերջերս զեկուցեցին երկրի՝ երկար ժամանակ խնդիրներ ունեցած և անարդյունավետ հարկային եկամուտների հավաքման համակարգում նշանակալի բարելավման մասին: Վկայակոչելով Պետական Եկամուտների Կոմիտեի (ՊԵԿ) վիճակագրությունը ՝ 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հարկահավաքությունը աճեց մինչև 792,2 միլիարդ դրամ (մոտ $2 միլիարդ)՝ արտացոլելով 12 տոկոսանոց աճ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Համաձայն նոր տվյալների՝ թվում է, թե Հայաստանի կառավարությունը կարող է իրականացնել 2012թ. ավարտին նախատեսված հարկերի հավաքման սահմանված թիրախը: Այդ թիրախը, որը հարկահավաքության բնագավառում կազմում է 874 միլիոն դրամ , 13 տոկոսով ավելի է, քան 2011թ. նպատակը, սակայն այն պարտադիր կերպով պետք է կատարվի, որպեսզի կառավարությունը կարողանա արդարացնել և խթանել բյուջեի դեֆիցիտի մինչև ՀՆԱ-ի 3 տոկոսի նվազեցման իր մտադրությունը՝ միաժամանակ 2012թ. ավելացնելով պետական ծախսերը:

Բարելավված հարկահավաքության թվերը ցույց են տալիս ավելի ընդարձակ բարելավում տարբեր հարկերի հավաքման գործընթացում, սակայն միակ ամենակարևոր աճը գրանցվեց ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հավաքման մեջ, ինչը հանդիսանում է որպես պետական բյուջեի եկամուտների խոշորագույն աղբյուր: Տվյալների համաձայն՝ ԱԱՀ-ի հավաքումը

ավելացավ 12,6 տոկոսով՝ 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հասնելո մոտ 334 միլիարդ դրամի: 2011-2012թթ. կորպորատիվ շահույթի հավաքված հարկերը աճեցին 16,3 տոկոսով, իսկ ծխախոտի և ոգելից խմիչքների, ներմուծման տուրքերի և հանքարդյունաբերական լիցենզիոն վճարները բարելավվեցին անցյալ տարվա համեմատ:

-Ռիչարդ Գիրագոսյան

Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում